«ՔՈՂԱՐԿՎԱԾ» ՀՈԼՈՎԱՀԻՄՔԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ*

ՀՏԴ 811.19 (479.28)

Խաչատրյան Լալիկ
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ
Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Երևան, Հայաստանի Հանրապետություն
lingualal51@mail.ru

Հին հայերենի քերականական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոլովման համակարգում կան որոշակի հոլովածներ, որոնց հոլովական հիմքերը (սերիչ կաղապարները) տվյալ հարացույցում արտացոլված չեն. այդ կարգի բառածները հիմնականում անվանական և դերանվանական հոլովահիմքեր են, որոնց հարացուցային ձևերը կենսունակ գործածություն ունեն լեզվում, մինչդեռ դրանց սկզբնաձևերը գործածություն չեն ունեցել:

Քերականական այդ ձևերը «քողարկված» հոլովահիմքեր են, որոնք հանդիպում են հին հայերենի գոյականի, ածականի, թվականի և դերանվան հոլովական հարացույցներում, որոնց բացահայտումը կարելի է կատարել ներքին վերականգնման մեթոդիկայի օգնությամբ: Այդ եղանակի գործադրմամբ հիմնականում բացահայտվում են անուն խոսքի մասերի եզակի և հոգնակի գործիականի սերիչ կաղապարները, ինչպես՝ այր բառի եզակի գործիականի արամբ և հոգնակի գործիականի արամբք ձևերը ենթադրում են եզակի սեռականի արան հոլահիմքի առկայությունը, սակայն այդպիսի ձև լեզվում արձանագրված չէ, որ մնացել է իբրև «քողարկված» հոլովական հիմք:

Ըստ այդմ, նմանատիպ բառերի հոլովումը ավանդաբար դիտվել է շեղում, անկանոն կամ զարտուղի՝ ելնելով հարացույցում դրանց ելակետային միավորների «բացակայությունից»:

Ներքին վերականգնման մեթոդիկայի և հակադարձ վերականգնման եղանակի գործադրմամբ հնարավոր է բացահայտել հին հայերենի «քողարկված» հոլովական հիմքերը՝ վերականգնելով նախագրային հայերենի հոլովական համակարգի ամբողջական վիճակը՝ անկանոն կամ զարտուղի հոլովման բառերի պարագային:

Բանալի բառեր՝ *հոլովահիմք, «քողարկված» հիմք, հոլովածև, հարացույց, ներքին վերականգնում, սերիչ կաղապար, անկանոն հոլովում, հին հայերեն, նախագրային հայերեն*

Ներածություն

Լեզվի տարժամանակյա դիտվածքում՝ նրա քերականական համակարգում, տեղի են ունենում փոփոխություններ, որի ընթացքում լեզվական որոշակի ձևեր կարող են

*Հոդվածը ներկայացվել է 3.10.2022:
Տպագրության է երաշխավորել բ.գ.թ..Ա. Հարությունյանը:10.10.2022
Հոդվածն ընդունվել է տպագրության 24.10.2022:

այնքան հեռանալ իրենց սկզբնաձևերից, որ նրանց միջև կապն այլևս չգիտակցվի: Այդ կարգի սկզբնաձևերը կարող են «քողարկված» մնալ լեզվի քերականական համակարգի «ընդերքում», եթե դրանք չբացահայտվեն պատմահամեմատական մեթոդի ներքին մեկնաբանության եղանակների միջոցով:

Այդպես հայերենի գրավոր շրջանից ավանդված քերականական որոշ ձևեր կորցրել են կապը նախագրային հայերենի համապատասխան սկզբնաձևերի հետ, մյուս կողմից՝ հին հայերենում հանդիպում են որոշ թեք ձևեր, որոնց սկզբնաձևերը հին հայերենի գրավոր հուշարձաններում արձանագրված չեն: Այլ կերպ ասած՝ լեզվում կան որոշակի քերականական ձևեր (բառաձևեր), որոնք, որպես սկզբնահիմքեր, բացահայտման և մեկնաբանության կարիք են զգում: Այդ կարգի «քողարկված» ձևերի բացահայտումը կարելի է կատարել ներքին վերականգնման մեթոդիկայի օգնությամբ:

Ներքին վերականգնման մեթոդիկայի եղանակներից է նախաձևերի վերականգնումը. այս եղանակը վերաբերում է ոչ միայն ցեղակից լեզուների տարածքում լեզվական որևէ ձևի նախնական վիճակի վերականգնմանը, այլև որևէ լեզվի շրջանակներում քերականական նախնական ձևի բացահայտմանը, այսինքն՝ տվյալ ձևի ժամանակագրորեն նախնական վիճակի վերականգնմանը[1]:

Նախաձևերի վերականգնումը կատարվում է նաև հակադարձ վերականգնման մեթոդիկայի օգնությամբ, համաձայն որի բացահայտվում են, օրինակ, գոյականական և բայական բառաձևերի սկզբնական ձևակազմական հիմքերը (հոլովական կամ խոնարհման)[2]:

Այսպես, արդի հայերենում Հատիս, Գորիս, Կեչառիս, Թեղենիս և նմանատիպ այլ գոյականներ դիտվում են ուղղականի հոլովաձևեր: Մինչդեռ հակադարձ վիճակագրության մեթոդիկայի օգնությամբ պարզվում է, որ դրանք հանգում են նախագրային հայերենի հոլովական հարացույցի հոգնակի հայցական հոլովին. այդ բառերի հոգնակի (անեզական) ուղղականի ձևերն են Հատիք, Գորիք, Կեչառիք, Թեղենիք ելակետային բառույթները: Այլ կերպ ասած՝ նախագրային հայերենի Հատիք, Գորիք, Կեչառիք, Թեղենիք բառույթներն ընդհանուր հայերենի համապատկերի վրա հոգնակի ուղղականի «քողարկված» հոլովաձևեր են[3]:

Նմանապես, ժամանակակից հայերենի բայական համակարգում ընթերցել, լցնել, խցկել և այլ բայեր դիտվում են անորոշ դերբայի ձևեր, ելակետային բառույթներ, որոնց առաջին հիմքն են համարվում ընթերց, լից, խից ձևերը: Մինչդեռ այդ հիմքերը հանգում են գրաբարի ընթեռնուլ, լնուլ, խնուլ բայական բառույթների երկրորդ՝ անցյալի հիմքին (ընթերց, լից, խից) և այլն[4]:

---

[1]В.И. Кодухов, Щбщее языкознание, М., 2013, էջ 230 - 241.

[2]Լ.Խաչատրյան, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 2021, էջ 371-372:

[3]Հմմտ. Ա. Բագրատունու հետևյալ դիտարկումը. «Յոգնակի ուղղականն ոչ սակաւ ուրեք փոխանակ քէի սէիւ լինի, մանաւանդ յանեզական անուանս. Քան զարարտեանն բարձր Մասիւք կամ մասիք, որ է բուն անեզական ուղղական անուն լերինն Մասեաց, որ է՝ Մասիս» (Տե՛ս Ա.Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 46.):

[4]Տե՛ս Լ.Խաչատրյան, Գրաբարյան բայահիմքերի բառակազմական արժեքը հայերենում, «Էջմիածին», Ս.Էջմիածին, Գ, 2018, էջ 54-67:

Տեսնենք՝ ինչպես են խնդրո առարկային արձագանքել հայերենի տարբեր շրջանների քերականները:

Բովանդակություն

Հին հայերենի քերականները *գոյականի հոլովական համակարգը ներկայացնելիս ցույց են տվել որոշակի հարացուցային ձևեր, որոնք կանոնավոր ձևերից շեղվում են, սակայն չեն փորձել տալ այդ կարգի ձևերի ծագումնաբանությունը կամ դրանց սերող հոլովական հիմքերը:*

Ա.Բագրատունին *քերականներից առաջինն է, որ հանգամանորեն ներկայաց-նում է հին հայերենի զարտուղի հոլովման գոյականների զուգահեռ որոշ հոլովաձևեր և հաճախ փորձում է պարզել հարացուցային այդ ձևերի հոլովակազմական հիմքերը*[1]*: Այսպես, նա տալիս է զարտուղի հոլովման գոյականների գործիականի զուգահեռ ձևերը՝ հարբ – հարամբ, մարբ, երբեմն՝ մարամբ (հոգնակին չունի), (էջ 35), կնոջ – կնաւ (հոգնակին չունի) – կնամբ – կնամբք (35), երբեմն՝ կնաւ (60): «Երևին սակաւ ուրեք հոլովք ինչ անուանց կրկին հոլովեալք, որպէս, կնոջ – կնոջաւ – կնոջով, մեղր – մեղու – մեղուի – կամ մեղուոյ (էջ 45):*

Սակայն եթե կնոջաւ – կնոջով գործիականի հոլովական ընդհանուր հիմքը սեռականն է՝ կնոջ, ապա կնաւ – կնամբ բառաձևերի համար հոլովակազմական հիմքը մնում է «քողարկված»:

Գ.Ավետիքյանը *որոշ դեպքերում (գոյականի, դերանվան և թվականի հոլովման համակարգում) տալիս է մեզ հետաքրքրող «թաքնված» հոլովաձևերը, սակայն չի մեկնաբանում այդ ձևերը*[2]*, այսպես, ընդունում է մարդկամբ և մարդկաւ գործիականի ձևերը (13), կնաւ – կանամբ, տիկնաւ- տիկնամբ (28), ասր բառի ասեր սեռականի ձև չկայ գրոց մէջ. մէկ տեղ մը կայ ասերբ (20), երկոքին թվականի համար ընդունում է երկոքումբ և երկոքումբք ձևերը (36), իւր դերանվան համար տալիս է սեռականում նաև իւրեան ձևը (45), որից մակաբերվում է իւրեամբ գործիականը, իւր անձնական դերանվան բացառականի համար տալիս է յիւրմէ ձևը, սակայն հարց է առաջանում.որտեղի՞ց է գալիս այդ ձևը, եթե տրականում չկա արձանագրված իւրում ձևը:*

Վրթ. Չալըխյանն *առավել հանգամանորեն է անդրադառնում հոլովման համակարգում տեղ գտած ոչ հարացուցային ձևերին, որոնք լրացնում և ամբողջացնում են հոլովման նկարագրությունը, սակայն նրա ուսումնասիրությունը դասագիրք է, հետևաբար՝ այն գիտական վերլուծության չի ենթարկում հոլովակազ–մության հարցերը, այլ տալիս է հոլովների թեք ձևերն այնպես, ինչպես ընդունված է ժամանակի քերականագիտության մեջ*[3]*:*

Մանր, ծանր, փոքր բառերի հոլովումը ներկայացնում է հոգնակի գործիա–կանում մանումբք, ծանումբք, փոքումբք ձևերով՝ առանց հիմնավորելու դրանց հոլովակազմական՝ եզակի գործիականի հիմքը (13):

Զարտուղի հոլովման բառերը՝ այր, հայր, մայր, եղբայր, տալիս է եզակի սեռական՝ առն, հաւր, մաւր, եղբաւր, գործիական՝ արամբ, հարբ, մարբ, եղբարբ, հոգն. գործիա-

---

[1]Ա. Բագրատունի, Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

[2]Գ.Աւետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815:

[3]Վրթ. Չալըխեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Ի տպարանի Մխիթարեան Հարց, Ի Վիեննա, 1827:

կան՝ արամբք, հարբք, մարբք, եղբարբք (19–20) ձևերով, մինչդեռ հոգնակի գործիականի արամբք ձևի հոլովակազմությունը մնում է բաց:

Կին բառի եզակի գործիականում տալիս է կնամբ – կնաւ զուգաձևությունը, հոգնակի գործ՝. կանամբք, մինչդեռ, թվում է, կնաւ հիմքը չի մասնակցում հոլովակազմությանը: Տիկին բառի եզ. տրական՝ տիկնոջ, գործ՝. տիկնամբ (21), իսկ եզակի գործիականի տիկնամբ ձևի հոլովակազմությունը մնում է բաց. ո՞րն է սեռական հոլովածը:

Իւր անձնական դերանվան եզակի տրականն է իւր-իւրեան զուգաձևությունը, գործ. իւրեւ, երեաւ, երեամբ: Իւրեան ձևից՝ իւրեամբ (34): Ըստ այդմ՝ իւրեամբ ձևի հոլովակազմությունը հիմնավորված է:

Մ.Չամչեանը *գրաբարի քերականության մեջ, ըստ ամենայնի ներկայացնում է հին հայերենի հոլովման համակարգը, որտեղ տեսնում ենք ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն (չպատճառաբանված) հոլովածներ, որոնք ավանդաբար հայ քերականագիտության մեջ դիտվել են «զարտուղի հոլովման» բառեր: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ անկանոն հոլովածներ կան նաև այն բառերի հոլովման համակարգում, որոնք բնավ անկանոն կամ զարտուղի չեն համարվում[1]:*

Փոքր բառի համար տալիս է տրականի փոքու, մանր բառի համար՝ մանու, գործիականում՝ փոքու, փոքումբ և մանումբք ձևերը, մինչդեռ սեռականի փոքում և մանում հիմքերը մնում են անտեսված (15): Այդպես նաև՝ տեառն եզ. գործիական՝ տերամբ (հիմքը մնում է չբացահայտված), (20), կին եզ. տրական՝ կնոջ, եզ. գործիական՝ կնաւ (չի բացահայտում գործիականի հիքը և հոգնակին), մինչդեռ տալիս է եզակի և հոգնակի գործիականի կնամբ – կնամբք կազմությունները (22): Անորոշ ոմն դերանվան համար տալիս է եզ. գործիականի ոմամբ ձևը (24), սակայն բառաձևի ոման հիմքը մնում է բաց:

Ա.Այտընյանն *աշխարհաբարի քերականության մեջ ըստ անհրաժեշտության, ներկայացնում է հոլովման համակարգը[2], որտեղ կան չպատճառաբանված հոլովածներ, սակայն դրանց հիմքակազմությանը չի անդրադառնում. նա ընդունում է որոշակի հոլովածներ, որոնց հիմքերը պետք է փնտրել սկզբնաձևային կառույցներում:*

Այսպես, որ դերանվան համար ընդունում է յորմանէ բացառականի ձևը. նշանակում է՝ տրականում եղել է որման ձևը, որից՝ բացառականը), (77): Հարանց ձևը դիտում է արանց-ի համաբանության հետևանք, նմանապես՝ տերանց (433):

Ըստ էության, գրաբարի քերականները խնդիր չեն ունեցել ներկայացնելու անկանոն հոլովման գոյականների հոլովակազմական հիմքերը, թեև որոշ բառերի դեպքում ցույց են տալիս «թաքնված» այն հոլովահիմքերը, որոնցից սերում են բացառական կամ գործիական հոլովները:

Հայերենի արդի գոյավիճակի մասնագետները, խոսելով անկանոն հոլովման գոյականների հարացույցի մասին, փորձել են գիտականորեն հիմնավորել այսպես կոչված «տատանվող զուգաձևերը» (ըստ Գ.Ջահուկյանի):

Գ.Ջահուկյանը, *տարահիմք հոլովում ունեցող բառերի թեքական ձևերը ներկայացնելիս, նկատում է, որ դրանց եզակիի և հոգնակիի կազմության եղանակները եր-*

---

[1]Մ.Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1831:

[2]Ա.Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, հանդերձ ներածութեամբ եւ յաւելուածով յօրինեաց Հ.Արսէն Վ.Այտընեան, Վիեննա, 1886.

*բեմն չեն համընկնում, ինչպես՝ քարիւ – քարամբք, երիցու – երիցամբք, ծեռամբ – ծեռաւք, ոտամբ – ոտիւք: Մի շարք դեպքերում տատանում է նկատվում եզակիի ձևավորման մեջ՝ կնաւ - կանամբ և կնաւք / կանամբ-ք, դից – դիաւ-ք, ականջք – **ականջաւ-**ք, (երիցու) <u>երիցամբ</u> – երիցամբ-ք, (քարիւ) <u>քարամբ</u> – քարամբ-ք, (դրամբ) **/ դրաւ** – դրաւք, ոտն (ոտամբ) / **ոտիւ** – ոտիւ-ք և այլն[1]:*

Հին հայերենի հոլովման հիմքերի (ծագման) հարցերը քննելիս նա վկայում է մի շարք յուրահատկություններ, որոնք կապվում են հնդեվրոպական օրինաչափությունների, նախահայերենի և հին հայերենի օրինաչափությունների, սաղմնավորվող օրինաչափությունների հետ, որոնք փոխադարձաբար լրացնում են միմյանց:

*Նա նկատում է, որ երբ տարբեր հիմք ունեցող օրինաչափությունները համընկնում են, ապա առկա է լինում միևնույն արդյունքը, իսկ չհամընկնելու դեպքում կամ գերակշռում է մեկը, կամ առաջանում են **տատանվող զուգաձևեր** (ընդգծումը մերն է – Լ.Խ.). այդպիսին են խաչաձևման դոմինանտության և խաչաձևման զուգաձևության օրենքները[2]: Օրինակ՝ կնաւ գործիականի հետ զուգահեռ գործածվող կանամբ ձևի -ամբ-ի ա-ն համարում է արդյունք հոգնակի գործիականի և -ն հիմքով այլ բառերի գործիականի ազդեցության (էջ 182): Արանց, արամբ ձևերի առնչությամբ բերում է Ա.Մեյեի կարծիքը, որ դրանք կազմված են գառն և այլ բառերի հոլովման համաբանությամբ (183): Բարձր – բարձամբ. թեք ձևի հոլովման ժամանակ առկա է լրացուցիչ -ան տարր, որ թերևս ն-ով հիմքերի տարածված հոլովման համաբանության արդյունք է (189):*

***Ա.Աբրահամյանը,** հին հայերենի անկանոն կամ զարտուղի հոլովման բառերի ուսուցումը ներկայացնելիս, վկայում է քերականագիտական աշխատանքներում դիտարկված որոշակի բառաշարքեր և վկայում է քերականների տեսակետներն առ այն, որ այդ բառերի մի մասն ունի կանոնավոր հոլովում[3], թեև հարացույցում որոշ ձևերում շեղվում են՝ կրելով հնչյունական զանազան փոփոխություններ: Այնուհետև նկատում է, որ չի կարելի հաշվի չառնել հնչյունական այն յուրահատուկ փոփոխությունները, որոնք գալիս են շատ հնուց և շեղման տպավորություն են թողնում[4]:*

Այսինքն՝ պետք է ընդունենք, որ այդ բառերը նախագրային հայերենում ունեցել են կանոնավոր հոլովման օրինաչափություն, երբեմն հոլովական զուգաձևություններով, սակայն ժամանակի ընթացքում կորցրել են զուգահեռ որոշ հոլովաձևեր, իսկ մնացած ձևերը թողնում են «շեղման տպավորություն»:

Զարտուղի համարվող որոշ բառերի գործիական հոլովաձևի ստուգաբանական վերլուծությունն այս հարցի շուրջ կարող է որոշակի պարզություն մտցնել:

Այսպես, տէր բառի հոգնակի սեռականում Ա.Աբրահամյանը տալիս է տեարց և տերանց զուգահեռ ձևերը: Եթե նկատի ունենանք, որ «հոգնակի սեռականը կազմվում է եզակի սեռականից՝ -ց հոլովակերտ մասնիկի ավելացումով» (21), ապա հոգնակի տերանց ձևի հոլովակազմական հիմք պետք է համարել եզակի սեռականի տերան

---

[1]Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 91:
[2]Ջահուկյան, նշվ. աշխ, էջ 115:
[3]Գ.Աւետիքեան, Քերականութիւն, հայկական, էջ 24: Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն..., էջ 34 -37: Ստ. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 23: Ա.Ղարիբյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան,1937, էջ 105-115:
[4]Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 53:

կառուցատիպը, որ արձանագրված չէ եզակի թվի հոլովման հարացույցում, որը սակայն եզակի գործիականի հոլովակազմական հիմքն է՝ -բ հոլովակերտի ազդեցությամբ ենթարկված հերթագայական փոփոխության՝ տերան-բ > տերամբ:

Իմիջիայլոց, այս մոտեցումով կարելի է բացահայտել մի շարք «զարտուղի հոլովման բառերի» երբեմնի սեռականի ձևերը, որոնք, որպես գործիականից սերող կաղապարներ, առանց այդ սկզբունքի գործադրման, մնում են առկախ:

Այսպես, նշվում է, որ այր բառի առն, առն, յառնէ «եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում հոլովիչի դեր է կատարում արմատական ձայնավորը» (53): Մենք հակված չենք այս տեսակետին. «արմատական ձայնավորը» առն, յառնէ բառաձևերում քերականական իմաստ չի արտահայտում. այլ բան է, որ դիտարկում ենք նույն բառի հոգնակի սեռականը (որ կազմվում է եզակի սեռականից). արան +g > արանց: Եթե հետադարձ վերականգնման մեթոդով ստանում ենք եզակի սեռականի նախագրային ձևը (արան), ապա միանգամայն հիմնավոր է դառնում եզակի գործիականի արամբ հոլովածևը (արան +բ ելակետային վիճակից):

Ա.Աբրահամյանը նշում է. «Եզակի գործիականում և հոգնակի թվի թեք հոլովներում տեղի է ունենում Ա հոլովիչի հավելում» (53): Մեկ անգամ ևս նշենք, որ Ա հոլովիչը ոչ թե հավելում է (աճական), այլ եզակի սեռականում հանդես եկած կանոնավոր հոլովիչ՝ ներքին թեքման ցուցիչ, որ ունի քերականական արժեք՝ ***արան*** *(ռ-ր անցումը պայմանավորված է Ն ձայնորդից հեռանալու հանգամանքով):*

Հայր բառը եզակի սեռականում տրվում է հաւր (հօր) ձևով, հոգնակի սեռականում՝ հարց-հարանց զուգաձևությամբ (54). հարց է առաջանում. որտեղի՞ց է գալիս հարանց ձևը: Եթե վերականգնենք նրա սերող հիմքը (եզակի սեռականը), ապա կունենանք հարան ձևը, որ տրամաբանորեն ընկած է եզակի գործիականի չվկայված հարամբ բառաձևի հիմքում, առկա է հոգնակի գործիականի հարամբ + ք բաղադրյալ կառուցատիպում:

Ա.Աբրահամյանը (ինչպես՝ գրաբարի մյուս բոլոր քերականները) կին բառի եզակի գործիականում տալիս է կանամբ, կնաւ զուգահեռ ձևերը (56): Եթե կնաւ բառաձևի համար կարող ենք վերականգնել կն (կն-ոջ) սեռականի հիմքը, ապա կանամ-բ բառաձևի հիմքի որոնումը հոգնակի սեռականի (կանան-g) միջանկյալ օղակով տանում է եզակի սեռական՝ կանան, որից՝ եզակի գործիականի կանամբ (անհնչյունափոխ՝ կանան-բ) կազմությունը:

Տիկին բառի հոլովման հարացույցը հոգնակի թվում փոքր-ինչ տարբերվում է կին բառի հոլովումից. հոգնակի սեռականում՝ տիկնաց, տիկնայց: Թերևս այստեղ կա հոլովակազմական շեղում: Տրամաբանական է հոգնակի սեռականում ունենալ տիկնանց զուգահեռ ձևը (ինչպես կին բառի դեպքում): Այս մոտեցումը հենվում է եզակի գործիականի տիկնամբ ձևի վրա, որի եզակի սեռականում պետք է լիներ տիկնան (հմմտ. հոգն. սեռ. տիկնան – g), որից -բ հոլովակերտով՝ տիկնամբ (տիկնան - բ), հոգնակին՝ տիկնամ-բ-ք:

Վերոբերյալ բառերի եզակի սեռականի չվկայված ձևերն, աշուշտ, նախագրային շրջանում եղել են կանոնավոր ձևեր, որոնք ժամանակի ընթացքում ընկել են և, ըստ այդմ, չեն արձանագրվել մատենագրական հուշարձաններում: Այդ բառերն անխտիր ունեցել են ներքին թեքման օրինաչափություն՝ Ա հոլովիչով: Այդ օրինաչափության

դրսևորումներն են եզակի գործիականի և հոգնակի սեռականի հոլովաձևերը, որոնք պահպանել են Ա ներքին թեքման հարացույցը (համակարգը):

Այժմ փորձենք հակադարձ վերականգնման մեթոդիկայի օգնությամբ վերականգնել գրաբարի հոլովակազմական որոշակի հիմքեր, որոնք, իբրև քերականական ձևեր, արձանագրված չեն մատենագրության մեջ կամ կիրառություն չեն ունեցել: Այսպես կոչված «քողարկված» հիմքերը, սակայն, գործառական կարևոր դեր ունեն լեզվում.դրանք սերող կաղապարներ են դիտվում այլ հոլովաձևերի համար: Դա, մասնավորապես, վերաբերում է գրաբարի եզակի սեռական հոլովի պարզ ձևերին, որոնցից ձևավորվում է եզակի գործիական հոլովը, ակայն, ինչպես նշեցինք, այդ ձևերը «քողարկված» են մնացել լեզվի ձևաբանական մակարդակում: Սեռական հոլովի «քողարկված» կամ հավանական ձևերին զուգահեռ արձանագրվել են այլ հոլովաձևեր՝ հավանական ձևերի հետ կազմելով հոլովական զուգաձևություններ:

Այդ կարգի «քողարկված» հոլովահիմքեր են հանդիպում հին հայերենի գոյականի, ածականի, թվականի և դերանվան հոլովական հարացույցներում:

Դիտարկենք այդ իրողություններն ըստ առանձին խոսքի մասերի:

Ա. Քողարկված հոլովահիմքեր գոյականի համակարգում

*այր – առն // **արան** – արամբ(ք)*

*տէր- տեառն // **տերան** – տերամբ(ք)*

*հայր – հաւր // **հարան** – հարամբ(ք)*

*կին – կնոջ // **կանան** – կանամբ(ք)*

*տիկին – տիկնոջ // **տիկնան** – տիկնամբ(ք):*

*Յուրաքանչյուր բառաշարքի թեք ձևերի ձևակազմական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **արան, տերան, հարան, կանան, տիկնան** ձևերը «քողարկված» հոլովաձևեր են և, որպես գործիական հոլովի սերիչ կաղապարներ, սեռական հոլովում չեն դրսևորվել[1]: Դրա վկայությունն այն է, որ գործիականում ունենք մբ հնչյունակապակցությունը, որ ն-մ հերթագայության հետևանք է. Այն իր հերթին արդյունք է նբ – մբ առնմանական հնչյունափոխության: Եթե եզակի սեռականում չլինեին արան, տերան և նմանատիպ այլ ձևեր, գործիականում չէինք ունենա արամբ, տերամբ և նմանատիպ այլ կազմություններ:*

Ա. Քողարկված հոլովահիմքեր ածականի համակարգում

Լեզվական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանատիպ «թաքնված» հոլովաձևեր կան նաև գրաբարի ածականի հոլովման համակարգում: Ընդ որում, որպես ընդհանուր օրինաչափություն, «թաքնված» այդ ձևերից են կազմվել նաև ածականի գործիական հոլովաձևերը, որոնց արտահայտության պլանում գործում է նբ – մբ առնմանության հնչյունափոխական երևույթը, ինչ դիտարկեցինք գոյականի անկանոն հոլովման դեպքում: Դիտարկենք այդ ձևերը.

*բարձր – բարձու // **բարձուն** – բարձամբ(ք)*

*մանր – մանու // **մանուն** – մանումբ(ք)*

---

[1]Ա.Ղարիբյանը *կին* և *տիկին* բառերը համարում է Ո-Ա կանոնավոր հոլովում ունեցող բառեր և նկատում է. *«կանանց, ի կանանց, կանամբք* ձևերի մեջ երևացող ն-ն հավանական է՝ սեռականի հոլովակազմիչ ն-ն է» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 114): Մենք այս ենթադրությունը հավանական ենք համարում. հետևաբար՝ պետք է կարծել, որ *կին* բառը եզակի սեռականում ունեցել է *կանան* հոլովաձևը, որ համարվում է եզակի գործիականի «թաքնված» հոլովական հիմքը:

*փոքր – փոքու // **փոքուն** – փոքումբ(ք) և այլն:*

Աժականի գործիական հոլովի կազմության հետընթաց քայլերն այլ օրինաչափություն են բացահայտում «թաքնված» հոլովաձևերի արտահայտության պլանում: Այսպես, գործիականի մբ հնչյունակապակցությունը ցույց է տալիս, որ եզակի սեռական հոլովում բառաձևն ունեցել է -ն ձայնորդ (բարձուն, փոքուն և այլն), որը -բ հոլովակերտից առաջ և նրա ազդեցությամբ դարձել է -մ: Այդ հնչյունի առկայությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ դրանց հոգնակի ուղղականը կազմվում է եզակի սեռականից և ունենում է բարձուն-ք, փոքուն-ք, մանուն-ք և այլ ձևեր: Այս կարգի աժականների հոլովման հարացույցում երկու հանգամանք մատնանշում են եզակի սեռականում հնարավոր -ն ձայնորդի առկայությունը. առաջինը եզակի գործիականի կառուցատիպն է (-մբ), երկրորդը՝ հոգնակի ուղղականի կազմությունը (-նք):

Գ. Քողարկված հոլովահիմքեր թվականի համակարգում

Թվականի հոլովման համակարգում որոշ ձևերի գործիականի կազմության հետընթաց քայլերը ևս բացահայտում են «քողարկված» սեռականի որոշ հոլովաձևեր, որոնք, ինչպես նշեցինք, գործնականում կիրառություն չեն ստացել մատենագրական երկերում:

Այսպես, անձներական թվականները, որոնք կիրառվում են միայն հոգնակի թվով (որպես անեզական բառեր), հոգնակի գործիականում ունենում են -բք հնչյունակապակցությունը, որտեղ -ք հոգնակիակերտ մասնիկն ավելանում է եզակի գործիականի ձևին, որը վերջանում է -բ հոլովակերտով: Հարցն այն է, որ այդ բառերը եզակի հոլովման հարացույց չունեն և գործածվում են միայն հոգնակի թվով. այդ դեպքում ինչո՞վ բացատրել հոգնակի գործիականի հոլովական հիմքերը երկոքումբ, չորեքումբ, հնգեքումբ և այլ թվականների դեպքում: Ակնհայտ է, որ անձներական թվականներն ունեցել են եզակի թվի հոլովական հարացույց, որի վկայությունը հոգնակի այն հոլովներն են, որոնք կազմվում են եզակիի ձևերից, ինչպիսիք են եզակի և հոգնակի գործիականի ձևերը: Ընդ որում, ելնելով հնչյունափոխական (առնմանության) օրինաչափությունից, կարող ենք ասել, որ անձներական թվականների եզակի գործիականի սերիչ կաղապարը՝ եզակի սեռականը, ունեցել է երկոքուն, չորեքուն, հնգեքուն ձևերը, որոնց վերջին ձայնորդը ենթարկվել է առնմանության հնչյունափոխության (-բ հոլովակերտի ազդեցությամբ): Եզակի գործիականի հնչյունափոխված ձևերը դառնում են հոգնակի գործիականի հոլովական հիմքեր: Կարելի է ցույց տալ այդ թվականների վերակազմավորման ընթացքը հետևյալ գծային պլանով.

*երկոքին – **երկոքուն** (եզ. սեռական) - **երկոքումբ** (եզ. գործիական) – **երկոքումբք** (հոգն. գործիական), չորեքին – **չորեքուն** (եզ. սեռական) - **չորեքումբ** (եզ. գործիական) – **չորեքումբք** (հոգն. գործիական), հնգեքին – **հնգեքուն** (եզ. սեռական) է **հնգեքումբ** (եզ. գործիական) – հնգեքումբք (հոգն. գործիական) և այլն:*

Դ. Քողարկված հոլովահիմքեր դերանվան համակարգում

«Քողարկված» հոլովահիմքերն առավել տարածված են դերանվան հոլովման հարացույցում: Հին հայերենի որոշյալ, ստացական և ցուցական դերանունների հոլովման հարացույցում որոշ հոլովաձևեր առաջին հայացքից պատճառաբանված չեն. հոլովական հարացույցում դրանց ձևակազմական հիմքերը «չեն երևում» կամ մնում են «քողարկված»: Ինչպես նախորդ խոսքի մասերի թեքական ձևերի հարացույցում «թաքնված» հոլովական հիմքերը բացահայտվեցին հակադարձ վերակազմավորման

սկզբունքով, այդպես էլ նույն մոտեցումով կարող ենք պարզել թվականի համակարգում գործող «քողարկված» հոլովական հիմքերը: Մենք դրանք անվանում ենք «գործող» հոլովական հիմքեր, որովհետև դրանց հիման (հիմքի) վրա են ձևավորվել (կազմվել) հոլովական հարացույցի մյուս անդամները՝ հիմնականում եզակի սեռական, բացառական, գործիական և հոգնակի գործիականի թեք ձևերը:

Այսպես, որոշյալ դերանունների ամենեքին, ամենեքեան, բոլորեքին, բոլորեքեան եզակի և հոգնակի գործիականի հիմքերը համարվում են «քողարկված» հիմքեր, որոնք մեկնաբանվում են անձներական թվականների ձևակազմական սկզբունքով (օրենքով).ամենեքին – (եզ. սեռական) ***ամենեքուն*** *– (եզ. գործիական)* ***ամենեքումբ*** *– (հոգն. գործիական)* ***ամենեքումբք,*** *բոլորեքին – (եզ. սեռական)* ***բոլորեքուն*** *– (եզ. գործիական)* ***բոլորեքումբ –*** *(հոգն. գործիական)* ***բոլորեքումբք*** *և այլն:*

Հին հայերենում իր ստացական դերանունը գործիականում ունի նաև իրեամբ ձևը, որ չի հանդիպում այդ դերանվան հոլովական հարացույցում: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ եզակի գործիականը կազմվում է եզակի սեռականից, և որ եզակի սեռականը տվյալ դեպքում ունի իրում ձևը, ապա կարող ենք ասել, որ իր ստացական դերանունը եզակի սեռականում պետք է ունեցած լինի իրեան հոլովածևը, որի վերջին -ն ձայնորդը եզակի գործիականի -բ հոլովակերտի ազդեցությամբ ենթարկվել է առնմանական հնչյունափոխության՝ նբ – մբ: Ըստ այդմ՝ իր ստացական դերանվան եզակի սեռականի իրեան հոլովածևը «քողարկված» հոլովական հիմք է[1]:

Սոյն, դոյն, նոյն ցուցական դերանունները հոգնակի գործիականում ունեն սովիմբք, դովիմբք, նովիմբք ձևերը, որոնց հոլովակազմական հիմքերն են եզակի գործիականի համապատասխան ձևերը՝ սովիմբ, դովիմբ, նովիմբ: Հոլովակազմության օրենքը ենթադրում է դրանց ծագումը եզակի սեռականից, ընդ որում՝ ենթադրյալ եզակի սեռականում պետք է վերականգնել -մ ձայնորդի անհնչյունափոխ (ելակետային) վիճակը: Հետևաբար՝ եզակի սեռականի «քողարկված» հոլովածևեր են համարվում սովին, դովին, նովին թեք ձևերը, որոնք հոլովակազմական հիմքեր են եզակի գործիականի համար՝ համապատասխան հոլովակերտով (և առնմանական հնչյունափոխությամբ)՝ սովիմբ, դովիմբ, նովիմբ: Այս ձևերը, իբրև հոլովակազմական հիմքեր, հանդիպում են հոգնակի գործիականում՝ սովիմբ-բ, դովիմբ-բ, նովիմբ-բ:

Հին հայերենի քերականական ձեռնարկներում սովին, դովին, նովին ձևերը տրվում են որպես գործիականի ձևեր, որոնցից -բ հոլովակերտով կազմվել են գործիականի զուգահեռ հոլովածևեր[2]:

Կարծում ենք՝ ենթադրյալ սեռականի ձևերի գործածությունը գործիականի իմաստով կատարվել է հոլովների ձգողականության օրենքի համաձայն:

---

[1] Վրթ. Չալըխյանը հիմնավորված է համարում *իր* անձնական դերանվան եզակի գործիական հոլովածևը (իրեամբ)՝ այն դուրս բերելով եզակի սեռականի ձևից՝ *իրեան* (Վրթ. Չալըխեան, 1827, 34): Հմմտ. նաև Գ. Աւետիքեան, 1815, 45:

[2] Տես Ա.Բագրատունի, նշվ., աշխ., էջ 91: Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 80: Հ.Ավետիսյան-Ռ.Ղազարյան, Գրաբարի դասընթաց, Եր., 1976, էջ 109: Լ.Խաչատրյան,Գ.Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, էջ 124:

Հին հայերենի ոմն անորոշ դերանվան եզակի գործիականն է ոմամբ, որի ենթադրյալ հիմքը՝ եզակի սեռականը (ման), լեզվում արձանագրված չէ. «քողարկված» այդ հիմքը գտնում ենք նաև բառի հոգնակի ուղղականում՝ ոմանք-ք[1]:

Այս ցուցական դերանունը եզակի և հոգնակի բացառական հոլովներում ունի այնպիսի հոլովահիմքեր, որոնք պետք է փնտրել համապատասխան հոլովներում (եզակի և հոգնակի տրական հոլովներում): Հմմտ. այս – (եզ. բացառական) յայսմանէ, որի հիմքը (այսման) եզակի տրականում արձանագրված չէ. այն մնում է որպես «քողարկված» հոլովածև եզակի տրականում: Նմանապես, այդ բառի հոգնակի բացառականը՝ յայսցանէ, ունի «քողարկված» հոլովահիմք՝ այսցան, որ չի հանդիպում հոգնակի տրականում:

Ընդհանուր առմամբ, թեև հին հայերենի հոլովական համակարգն ըստ ամենայնի ուսումնասիրված է, այնուամենայնիվ, կան հարցեր, որոնք լուսաբանման կարիք են զգում: Այդ կարգի հարցերից են «քողարկված» հոլովահիմքերի ուսումնասիրությունը, նրանց բացահայտումն ու մեկնաբանությունը, որ կարող է որոշակի պատկերացում տալ նաև հայերենի նախագրային վիճակի վերաբերյալ՝ հոլովակազմության կտրվածքով: Նմանատիպ հարցերի լուծման բանալին տալիս են լեզվաբանական հետազոտության մեթոդներն ու նրանց գործադրման եղանակները, որոնք ի զորու են բացահայտելու նախագրային հայերենի լեզվական օրինաչափությունները, լեզվական իրողությունների փոփոխության դինամիկան, որի ընթացքում (և որի հետևանքով) լեզվական որոշ ձևեր դուրս են եկել գործածությունից՝ որոշակի թեականություն մտցնելով հարացույցների լիարժեք նկարագրության հարցում: Գրաբարի հոլովական համակարգում «քողարկված» հոլովական հիմքերի բացահայտումն ու մեկնաբանությունը հայերենի պատմական քերականության կարևոր խնդիրներից են:

Եզրակացություն

Հին հայերենի քերականական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոլովման համակարգում կան որոշակի հոլովածևեր, որոնց հոլովական հիմքերը (սերիչ կաղապարները) տվյալ հարացույցում արտացոլված չեն. այդ կարգի ձևերը հիմնականում անվանական և դերանվանական հոլովահիմքեր են, որոնց հարացուցային ձևերը կենսունակ գործածություն ունեն լեզվում, մինչդեռ դրանց սկզբնաձևերը գործածություն չեն ունեցել:

Այդ կարգի բառաձևերը «քողարկված» հոլովահիմքեր են, որոնք հանդիպում են հին հայերենի գոյականի, ածականի, թվականի և դերանվան հոլովական հարացույցներում, որոնց բացահայտումը կարելի է կատարել ներքին վերականգնման մեթոդիկայի օգնությամբ: Այդ եղանակի գործադրմամբ հիմնականում բացահայտվում են անուն խոսքի մասերի եզակի և հոգնակի գործիականի սերիչ կաղապարները, որոնք գրաբարի հոլովական համակարգում արտացոլված չեն, և այդ կարգի բառերի հոլովումը դիտվել է շեղում, անկանոն կամ զարտուղի՝ ելնելով հարացույցի կարգային անդամների «քողարկված» դրսևորումից:

Ներքին վերականգնման մեթոդիկայի և հակադարձ վերականգնման եղանակի գործադրմամբ հնարավոր է վերականգնել հին հայերենի «քողարկված» հոլովական

---

[1] Բագրատունին ընդունում է ***ուտան – ուտամբ*** թեք ձևերը (սեռական – գործիական), (60), հետևաբար կարելի է ենթադրել նաև *ոմն – **ման** – ոմամբ* հոլովակազմական ձևերը:

հիմքերը՝ վերականգնելով նախագրային հայերենի հոլովական համակարգի լիարժեք վիճակը՝ անկանոն կամ զարտուղի հոլովման բառերի թեքման պարագային:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
2. Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1886:
3. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի դասընթաց, Երևան, 1976:
4. Աւետիքեան Գ., Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815:
5. Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
6. Խաչատրյան Լ., Գրաբարյան բայահիմքերի բառակազմական արժեքը հայերենում, «Էջմիածին», Ս. Էջմիածին, Գ, 2018:
7. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան, 2004:
8. Խաչատրյան Լ., Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 2021:
9. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937:
10. Մալխասյանց Ստ., Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891:
11. Չալըխեան Վրթ., Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1827:
12. Չամչեան Մ., Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1831:
13. Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959.
14. В.И. Кодухов, Общее языкознание, М., 2013.

REFERENCES

1. Abrahamyan A., Grabari d'er'nark, [Course of Old Armenian, Yerevan, Luys, 1976], (in Armenian).
2. Ayty'nean A., Qnnakan qerakanut’yun ashxarhabar kam ardi hayere'n lezui, [Investigative Grammar of Modern Armenian, Venna, 1886], (in Armenian).
3. Avetisyan H., Ghazaryan R., Grabari dasynt’ats’, [Grabar course, Yerevan, 1976], (in Armenian).
4. Awetik’ean G., Qerakanut’yun haykakan, [Armenian Grammar, Venice, 1815], (in Armenian).
5. Bagratuni, A., Hayere’n qerakanut’yun i pe’ts zargaceloc [The Armenian Grammar for the Intelligent, St. Lazar, Venice, Mkhitaryan Miabanutyun, 1852], (in Armenian).
6. Khach’atryan L., Grabaryan bayahimk’eri barrakazmakan arzhek’y hayerenum, [The Lexical Value of Oldarmenian Verbal Stames in Armenian, «Ejmiadzin», N 3, S. Ejmiadzin, 2018], (in Armenian).

7. Khachatryan L., Tosunyan G., Grabari dasagirk', [Grabar textbook, Yerevan, 2004], (in Armenian).
8. Khachatryan L., Lezvabanakan terminneri usumnakan bararan, [Educational Dictionary of Linguistic Terms, Yerevan, 2021], (in Armenian).
9. Gharibyan A., Hayots' lezvi patmut'yan usumnasirut'yan neratsut'yun, [Introduction to the Study of the History of the Armenian Language, Yerevan, 1937], (in Armenian).
10. Malkhasyants' St., Grabari holovumy, khonarhumy yev nakhdirnery, [Inflection, Conjugation and Prepositions of Old Armenian, Tiflis, 1891], (in Armenian).
11. Ch'alykhean Vrt', Qerakanut'iwn haykazean lezui, [Grammar of the Haikazyan language, Venna, 1827], (in Armenian).
12. Ch'amch'ean M., Qerakanut'iwn haykazean lezui, [Grammar of the Haikazyan language, Venice, 1831], (in Armenian).
13. Jahukyan G., Hin hayereni holovman sistemy yev nra tsagumy, [The Inflectional System of Old Armenian and its Genesis, Yerevan, 1959], (in Armenian).
14. V.I. Kodukhov, Obshcheye yazykoznaniye, [V.I. Kodukhov, General Linguistics, M., 2013], (in Russian)

РЕЗЮМЕ
«СКРЫТЫЕ» ОСНОВЫ В ПАРАДИГМЕ ИМЕН ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Хачатрян Лалик
Заведующий лабораторией лингвистических исследований Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, д.филол. н., профессор
Ереван, Республика Армения

Изучение грамматического строя древнеармянского языка показывает, что в словоизменительной парадигме некоторых слов есть формы, производящие основы которых утратились, несмотря на то, что иные образования от этих основ продолжают функционировать. Такие производящие основы называем «скрытыми». Они встречаются, в основном, в парадигмах имен. «Скрытые» основы, которые не нашли отражения в именных парадигмах древнеармянского, выявляются, например, в генеративных моделях творительного падежа единственного и множественного числа. Так, формы слова այր «человек» (արամբք) предполагают наличие формы արան в родительном падеже единственного числа, но последняя не зафиксирована в языке, почему и называем ее «скрытой». Фонологическое сочетание -մբ творительного падежа прилагательного բարձր во множественном числе (բարձա-մ-բ-ք) показывает, что словоформа в родительном падеже единственного числа имела согласную -ն (բարձու-ն), которая перед флексией -ք и под ее влиянием превратилась в -մ.

С помощью форм творительного падежа некоторых числительных восстанавливаются их «скрытые» формы родительного падежа (երկոքումբ-ք). Несколько иначе с неопределенным местоимепнием ոմն: Его форма творительного падежа единственного числа - «ոմամբ»; предполагаемая основа (ոման) в родительном падеже единственного числа не зафиксирована: Ее находим в именительном падеже множественного числа (ոման-ք):

Склонение похожих слов традиционно рассматривается как *неправильное* – ввиду наличия «скрытых» основ. Используя методику внутренней и обратной реконструкции, их можно восстановить, тем самым определив полную парадигму соответствующих слов в протоармянском языке.

Ключевые слова: спряжение, «скрытые» основы, падежная форма, парадигма, внутренняя реконструкция, генеративная модель, неправильное спряжение, древнеармянский, протоармянский.

SUMMARY

"HIDDEN" STEMS IN THE PARADIGM OF NAMES OF THE ANCIENT ARMENIAN LANGUAGE

Khachatryan Lalik

Armenian State Pedagogical Universityafter Kh. Abovyan,
Linguistic Research Laboratory, Head
Doctor of Sciences of Philology, Professor
Yerevan, Armenia

The study of the grammatical structure of the Old Armenian language shows that there are certain word forms in the inflectional system, the generative morphemes of which are not reflected in this scheme: word forms of this kind are mainly nominal and pronominal stems, the relative forms of which have a viable use in the language, while their primary forms are not used.

Those grammatical forms are “hidden” stems that are found in the stems of the Old Armenian noun, adjective, numeral, and pronoun, which can be revealed using the method of internal restoration.

With the help of this method, generative models of the singular and plural of the instrumental case of the nominative parts of speech are mainly revealed, which were not reflected in the inflectional system of the Old Armenian. For instance, the singular and plural forms of the word այր “man” in the instrumental case (արամ-բ-ք) suggest the presence of the stem "արան" in the genitive singular, but this form is not fixed in the language, it remains as a “hidden” stem. The phonologic combination -մբ of the instrumental case of the adjective "բարձր" in the plural (բարձա-մ-բ-ք) shows that the word form in the genitive singular had the vowel -ն (բարձու-ն), which before and under the influence of inflection -ք turned into -մ. The reverse steps in the formation of the instrumental case of the numeral of some forms also reveal some “hiddenness” of the genitive case form (երկոքում-բ-ք). The singular instrumental of the indefinite pronoun "ոմն" is "ոմամբ", the assumed stem (ոման) in the genitive singular is not fixed: the “hidden stem” (ոման) is found in the plural of the nominative case (ոման-ք):

Accordingly, the conjugation of similar words has traditionally been observed as incorrect based on the "masking" of their original units in the paradigm.

Using the technique of internal restoration and the method of reverse restoration, it is possible to restore the "hidden" inflectional foundations of the Proto-Armenian language, restoring the full state of the inflectional system of words of irregular declensions.

Key words **-** conjugation, "hidden" stems, case form, paradigm, internal reconstruction, generative model, irregular conjugation, Old Armenian, Proto-Armenian.